<<ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի 2023-2028 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Դպրոցում են ձևավորվում հայրենիքի հանդեպ անմացորդ սերն ու հարգանքը

Դպրոցում պիտի շարունակվեն կիսատ մնացած հայրենանվեր գործերն ու իրականացվեն անավարտ երազանքները

Փառք ու պատիվ մեր զինվորներին

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

1.Հաստատության գործունեությունը

2.Իրավիճակի վերլուծությունը,ուժեղ և թույլ կողմեր

3.Նպատակների և խնդիրների սահմանում

4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը:

5.Պատասխանատուները

6.Արդյունքների գնահատման չափանիշները

7.Ռիսկերը

8.Գործընթացի կազմակերպման անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:

9.Վերահսկողության մեխանիզմները



https://www.facebook.com/groups/zaritapshcool

ֆեյսբուքյան անձնական կայք

1.Հաստատության գործունեությունը

ա. Դպրոցի առաքելությունը

- ✓ Բարենպաստ կրթական միջավայրի ապահովում յուրաքանչյուր սովորողի համար
- ✓ Հոգևոր-մշակութային բարձր արժեքների ուսուցանում
- ✓ Ռազմահայրենասիրական դաստիարակության պատշաճ կազմակերպում
- ✓ Ուսման բարձր որակի ապահովում, արդյունավետ և արդիական կրթության իրականացում:
- ✓ Յուրաքանչյուր շահառուի կյանքում առավելագույնս ազդեցություն ունենալ՝ սկսած ֆունկցիոնալ գրագիտությունից մինչև հնարավորությունների բացահայտում, գիտելիքի արժևորում և կիրառում, անհրաժեշտ կարողունակությունների ձևավորում

Դպրոցի տեսլականն է գտնվել անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ:

Եթե երեխային սովորեցնենք այսօր այնպես, ինչպես երեկ, ապա կզողանանք նրա վաղվա օրը:
Ջ. Դյուի

Բ.

Հայաստանի անկախացումից հետո կրթությունը կարևորագույն գործոն է ինչպես ազգային անվտանգության ապահովման, այնպես էլ հասարակական և համայնքային բարեփոխումների իրականացման, գիտելիքահեն տնտեսության ստեղծման տեսանկյունից:

Կրթության ոլորտի, մասնավորապես հանրակրթական դպրոցներում իրականացվող բարեփոխումները պետք է միտված լինեն արդյունավետ և միջազգային կրթական փորձի լավագույն չափանիշներին համապատասխան կրթական համակարգի ձևավորմանը:

Տեխնոլոգիական և նորարարական արագ զարգացող աշխարհին զուգահեռ ընթացք ապահովելու համար անհրաժեշտ քայլերից է հանրակարթական դպրոցների համապատասխան մոտեցումների որդեգրումն ու իրականացումը:

Զառիթափի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագրի հիմքում ընկած են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները,և ձևաչափը https://www.arlis.am/documentview.aspx?docid=168835 ՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, սովորողների, ծնողների մոտեցումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

Գ. zaritap@schools.am

Զառիթափի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1988թ.:

Տարիների ընթացքում ձեռք է բերել և շարունակում է պահպանել բարձր հեղինակություն հասարակության լայն շրջանում, ունի բավարար ռեսուրսներ որակյալ կրթություն ապահովելու համար

Դպրոցում աշխատում են 37 հոգի, որից 23-ը մանկավարժական աշխատողներ են:

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են

- մանկավարժական խորհուրդ- ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները
- աշակերտական խորհուրդ -ընդգրկված են 6-12-րդ դասարաններից երկուական սովորող
- ծնողական խորհուրդ- ընդգրկված են դպրոցի 1-12-րդ դասարանների ծնողական խորհուրդների նախագահները:
- մեթոդական միավորումներ

Համաձայն լիցենզիաների դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- տարրական հանրակրթական
- հիմնական հանրակրթական
- միջնակարգ հանրակրթական

Ընդհանուր 350 սահմանային տեղ

Այս պահին դպրոցում սովորում է 191 աշակերտ՝ ընդգրկված 12 դասարաններում :

Դպրոցը միահերթ է, աշխատանքային շաբաթը՝ հնգօրյա

2.Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

ա. Հաստատության շենքային պայմաններ

բ. Հաստատության նյութատեխնիկական բազա

գ. Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները՝ հաշվետու ժամանակաշրջանում

դ. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններ

ե. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

զ. Հաստատության ուսումնական միջավայր

է. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները

ը. Հաստատության տրամադրած կրթության որակ

թ. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները

ժ. Հաստատությունում առկա հիմնախնդիրները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
ա. Դպրոցի շենքային պայմանները	
1. Դպրոցն ունի բավարար շենքային պայմաններ, տարածքն առանձնացված է ցանկապատով: 2. Դպրոցը հսկվում է պահակների կողմից: 3. Դպրոցն ունի բացօթյա մինի ֆուտբոլի մարզադաշտ: 4. Դպրոցի մի թևի սանհանգույցները վերանորոգված են: 5. ԻՀԿ-ի պատուհաններն ունեն վանդակաճաղեր: 6. Դպրոցն ունի պահուստային ելքեր: 7. Վերանորոգված և կահավորված ֆրանսերենի դասասենյակ: 8. Վերանորոգված և կահավորված ճաշարան: 9. Մուտքի մոտ ունի ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքների համար նախատեսված թեքահարթակ, վերանորոգված սանհանգույց: 10. Լոկալ ջեռուցում: 11. Վերանորոգված ներառական կրթության կաբինետ: 12. Հիմնովին փոխված է էլեկտրականությունը : 13. Բավարար կահավորված դահլիճ: 14. Գրադարան:	1. Սպորտդահլիճը,հանդերձարանները ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք: 2. Չունի տեխնոլոգիայի համար նախատեսված արհեստանոց: 3. Քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ: 4. Համակարգչային թերհագեցվածություն: 5. Սանհանգույցների նախագիծը արված է, բայց պետությունը չի աջակցել: 6. Ապաստարանը անմխիթար վիճակում է, կարիք ունի վերանորոգման: 7. Տանիքը ունի վերանորոգման կարիք: 8. Ունի արևային էլեկտրաբլոկների կարիք: 9. Դահլիճը ունի ձևափոխման կարիք: 10. Բացօթյա կանաչ դասարան:

Բ.Նյութատեխնիկական բազա		
1. Համակարգչային կաբինետ: 2. Ճաշարանը կահավորված է: 3. Պլանշետներ: 4. Գրադարանը հագեցված է գրքերով: 5. ՆԶՊ կաբինետ:	1. Համակարգչային թերբեռնվածություն 2. Քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներում չկան համապատասխան սարքավորումներ և նյութեր: 3. Տեխնոլոգիայի արհեստանոցը չունի համապատասխան սարքավորումներ, եղածն էլ վաղուցվա է: 4. Մարզագույքի պակաս: 5. Սմարթ գրատախտակ: 6. ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա: 7. Պատմության թանգարան: 8. Ֆրանսերեն գրականության և դիդակտիկ նյութերի պակաս:	

Գ.Հաստատության շենքային պայմանները,նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները՝ հաշվետու ժամանակաշրջանում	
1.ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված թեքահարթակ 2020թ. 2.Սանհանգույցները նորոգվել են առնվազն 10 տարի առաջ: 3.Մեկ երեխա,մեկ համակարգիչ ծրագրի շրջանակներում գրասալիկներ 2017-2018թթ.	1. Դպրոցի բակը և աստիճանները կոսմետիկ վերանորոգման կարիք ունեն,նստարանների տեղադրում 2024-2025 2.Մնացած սանհանգույցների վերանորոգում 2024-2025: 3.Համալրել համակարգիչներով 2024թ. 4.Դպրոցական նստարանների նորացում 2023-2028թթ 5.Օկուլյար մանրադիտակի ձեռքբերում – անհապաղ 6.Մանրահատակի վերանորոգում-թարմացում 2023-ամառ 7.Դահլիճի բեմի գունեղ լուսավորություն 2023թ. 8. Երաժշտական գործիքներ-հատկապես դաշնամուր 2025թ. 9.Ընթերցասրահ ժամանակակից գրականությամբ և տեխնիկայով 2024թ. 10.Զառիթափ գյուղի պատմական սրահ-2026թ.

Դ.Կառավարման և խորհրդակցական մարմիններ	
1. Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքներ	1. Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ

Ե. Համագործակցություն համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	
1. ԿԳՄՄՆ https://www.facebook.com/photo/?fbid=2124753684296258&set=g.413561685777373 2. Վայոց ձորի մարզպետարան https://www.facebook.com/photo/?fbid=4634751206629814&set=g.413561685777373 3. Վայքի համայնքապետարան 4. Զառիթափի գյուղապետարան 5. ԿԶՆԱԿ 6. ԿՏԱԿ 7. ԴՏՇՀ 8. UNICEF https://www.facebook.com/photo/?fbid=2327343647392153&set	1. Համագործակցություն արտերկրի՝ Ռուսաստանի հայկական դպրոցների հետ: https://www.facebook.com/photo.php?fbid=2258044631036243&set=pb.100004921838314.-2207520000.&type=3 2. Համագործակցություն նախկին տարիների շրջանավարտների հետ 3. Համագործակցություն հանրապետության լավագույն դպրոցների հետ՝ Շիրակացու ճեմարան, Դիլիջանի կենտրոնական դպրոց, Գլոբալ-Բրիջ դպրոց և այլն:

=g.413561685777373 9. Համայնք-դպրոց ակտիվ համագործակցություն https://www.facebook.com/photo/?fbid=5034605459977718&set=g.413561685777373 10. Դպրոցը համագործակցում է Այբ դպրոցի հետ: https://www.facebook.com/photo/?fbid=5199518410153088&set=g.413561685777373 11. Վայք-Ինֆոտուն 12. Եղեգնաձորի երկրագիտական թանգարան https://www.facebook.com/photo/?fbid=4720028281435439&set=g.413561685777373 13. Վայոց ձորի մարզային գրադարան https://www.facebook.com/photo/?fbid=4720098231428444&set=g.413561685777373 14. Կարմիր Խաչի միջազգային կազմակերպություն https://www.facebook.com/photo/?fbid=4611688132250986&set=g.413561685777373 https://www.facebook.com/photo/?fbid=3536998646405081&set=g.413561685777373 15. ՊԱՐԱԴԻԳՄԱ կրթական հիմնադրամ https://www.youtube.com/watch?v=KtJQcnbcCfc&t=67s&ab_channel=ParadigmaEducationalFoundation 16. ԹՈՒՄՈ կենտրոն	4. ԿԶՆԱԿ-<<Ընթեցանությունը տարրական դպրոցում >> ծրագիր 5. Ֆինանսական կրթության շրջանակներում համագործակցություն կենտրոնական բանկի հետ: https://abcfinance.am/ifme/teacher.html

https://www.facebook.com/photo/?fbid=5166199326818330&set=g.413561685777373 17.ԻՄ ԴՊՐՈՑ կայք https://www.facebook.com/photo/?fbid=1918417294929899&set=g.413561685777373 18.Մանկավարժա-հոգեբանական կենտրոնի Վայոց ձորի մասնաճյուղ	

Զ. Հաստատության ուսումնական միջավայր

1. Դպրոցն ունի դահլիճ՝ 200 տեղով, գրադարան, ընթերցասրահ, համակարգչային դասարան, Թ. Խաչատրյանի անվան ֆրանսերենի ռեսուրս-կենտրոն: 2. Դպրոցն ունի ճաշարան, ուսուցչանոց, նախնական զինվորական պատրաստվածության կաբինետ, շախմատի դասասենյակ, ներառական կրթության դասասենյակ, բացօթյա մարզադաշտ 3. <<Փշոնք>> պարային համույթ: 4. ԱԳԸ ցուցահանդես-վաճառքներ 5. <<Պատանի դերասաններ>> թատերական խումբ: 6. Արտադպրոցական մանկապատանեկան տուրիստական կենտրոն:	1. Նորագույն նյութատեխնի-կական բազայով զինված առարկայական դասարաններ, աուդիո- դասարաններ 2. Բնագիտական լաբորատորիա (ֆիզիկա, քիմիա, կենսա-բանություն առարկաների համար առանձին դասա-սենյակներ) 3. SMART գրատախտակների բա-ցակայություն 4. ԱՐՄԱԹ լաբորատորիա 5. Ռոբոտաշինության, մենթալ թվաբանության, ծրագրավորման խմբակների բացակայություն 6. Սպորտային և գեղագիտական խմբակների բացակայություն 7. Օլիմպիադաներին, տարբեր մրցույթներին՝ Կենգուրու, Մեղու, Կորիզ նախա-պատրաստելու համար խմբակների բացակայություն 8. Շնորհալիների ակումբի բաց-կայություն 9. Բացօթյա դասարան

Է.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովվող միջոցառումներ	
1. Անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ, բարձր որակավորում ունեցող, ոլորտում առաջատար ուսուցիչներ: 2. Ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ: 3. Ուսուցիչների փոխհամագործակցություն: 4. Տարակարգ ունեցող ուսուցիչների առկայություն: 5. Հիմք է դրված կամավոր ատեստավորման՝ 2 ուսուցիչ:	1. Ուսուցիչների խրախուսման համար ֆինանսական սահմանափակ հնարավորություններ 2. ՏՀՏ կիրառման քիչ հնարավորություններ 3. ՍՄԱՐԹ գրատախտակի բացակայության պատճառով սմարթ դասերի բացակայություն 4. Լաբորատորիաների, մասնագիտական դասասենյակների պակաս 5. Միջազգային վերապատրաստումների պակաս 6. Որոշ առարկաների մասնագետների պակաս 7. Տղամարդ ուսուցիչների պակաս

Ը.Կրթության որակ	
1. Դպրոցը ունի բավարար հեղինակություն 2. Ավանդույթների պահպանում 3. Լեզուների ուսուցանում (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն) 4. Բարձր հեղինակություն և տարակարգ ունեցող ուսուցիչներ 5. Սկիզբ է դրվում էլեկտրոնային դասերի: 6. Բուհերում սովորող բազմաթիվ ուսանողներ: 7. Միջազգային բուհերում սովորողներ: 8. Հաջողակ շրջանավարտներ:	1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ցածր կիրառություն 2. Տեխնիկական ցածր զինվածություն 3. Ուսուցիչների կողմից տեսադասերի բացակայություն 4. Էլեկտրոնային դասերի պակաս 5. Փորձի փոխանակման նպատակով գործուղումներ տարբեր մարզերի և մայրաքաղաքի , ինչու չէ նաև արտերկրի առաջատար դպրոցներ: 6. Մասնագետ ուսուցիչների պակաս:

Թ.Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները	
1.Որոշակի հագեցվածություն ժամանակակից պահանջներին համապատասխանող տեղեկատվական տեխնոլոգիաներով: 2.Ինտերնետ կապ 3.Տեսախցիկներ միջանցքներում: 4.<<Մեկ երեխա, մեկ համակարգիչ >> ծրագիր: 4.Պլանշետներ: 5.<<Զառիթափի կարողունակ աշակերտներ>> ֆեսբուքյան կայք https://www.facebook.com/groups/zaritapshcool 6.Թումո հաճախող երեխաներ: 7.Թեմատիկ,նախագծային աշխատանքների Էլեկտրոնային ներկայացում	Բացակայում են՝ 1.Դպրոցի պաշտոնական կայքի վարում 2.,Մենթալ թվաբանությանե խմբակ 3.Արևային էներգիայի համակարգ 4.ՍՄԱՐԹ գրատախտակներ, 5.ԱՐՄԱԹ լաբորատորիա

Ժ.Հաստատությունում առկա հիմնախնդիրները	
1. Հարգանք ուսուցիչների նկատմամբ 2. Դպրոցի ավանդույթների պահպանում: 3. Սպորտի նկատմամբ հետաքրքրություն: 4. Մշակութային միջոցառումներում ընդգրկվածություն: 5. Սոցիալական պատասխանատվության ձևավորում:	1. Ընթերցանության հանդեպ հետաքրքրության պակաս: 2. Սոցիալական կայքերից կախվածություն: 3. Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրության պակաս: 4. Դպրոցական գույքի նկատմամբ ոչ սրտացավ վերաբերմունք: 5. Վատ սովորություններն ու բարքերը ընդօրինակելու հակում:

4.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ

ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է 2023-2028 թթ. ընթացքում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած խնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, նոր չափորոշիչների կիրառմանը և կրթօջախի առաջընթացին՝ ժամանակի նորարարություններին համընթաց: Իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման հիման վրա սահմանվել են զարգացման ծրագրի նպատակներն ու համապատասխան խնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը կոչված է ապահովելու դպրոցի բարեփոխումների նպատակով առանձնացված հետևյալ խնդիրների լուծումը՝

1. Ուսման արդյունավետության բարձրացում
2. Դպրոցի նյութատեխնիկական բազայի անընդհատ հարստացում, ամրապնդում
3. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ և ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ստեղծում
4. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակի բարձրացում, անընդհատ վերապատրաստումների կազմակերպում, այդ թվում՝ միջազգային, փորձի փոխանակման նպատակով մանկավարժների գործուղումներ տարածաշրջանի առաջատար դպրոցներ
5. Արտաբյուջետային հոսքեր ապահովելու նպատակով համապատասխան քայլերի ձեռնարկում
6. Ձեռնարկել միջոցներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ
7. Դպրոց-ընտանիք-համայնք կապի ամրապնդում
8. Դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդակցական մարմիններին, ստեղծել շրջանավարտների, հոգաբարձուների խորհուրդներ և օգտագործել ռեսուրսները
9. Սովորողների առողջության պահպանում, անվտանգ կենսագործունեության ապահովում:

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ

1. Բարեգործական աջակցություն (ներգրավել բարեգործ-բարերաների, հովանավորների, շրջանավարտների)
2. Իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեություն
3. Արևային էլեկտրաբլոկներից խնայած գումար
4. Վարձակալություն
5. Մրցութային հիմունքներով լրացուցիչ ֆինանսավորում բյուջեից

5.ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների նվիրատվություններ

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Դպրոցի կառավարման որակը բարձրացնելու համար հարկավոր է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը Անհարաժեշտ է զարգացնել կրթական գործընթացի մասնակիցների՝ սովորողի, ծնողի, մանկավարժական աշխատողների գործունեությունը, բարձրացնել նրանց դերը՝ անցնելով ժողովրդավար, մասնակցային թափանցիկ կառավարման:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը: Խորհուրդը ակտիվ մասնակցություն կունենա դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման աշխատանքներում՝ նպաստելով ֆինանսական միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սովորողների կրթության գործում մեծ է ծնողի դերը: Ծնողի հետ տարվող աշխատանքում կձեռնարկվեն հետևյալ միջոցառումները

- ✓ Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ, որտեղ կներկայացվեն դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին
- ✓ Ծնողներին ներգրավել դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպմանը, արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին
- ✓ Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը
- ✓ Ծնողներին ներգրավել երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում
- ✓ Ապահովել ծնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ, փորձել միասին գտնել խնդիրների լուծման ուղիներ, գործել բաց, թափանցիկ
- ✓ Ծնողների համար կազմակերպել միջոցառումներ, կինոդիտումներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ,բաց դռների օր:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցում հարկավոր է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը: Անհրաժեշտ է լսել սովորողների կարծիքը, խնդրահարույց հարցերի շուրջ որոնել փոխհամաձայնեցված լուծման ուղիներ:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Անհրաժեշտ է ձևավորել հոգաբարձուների խորհուրդ,դրա կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների,տեղական իշխանության ներկայացուցիչների:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում աշխատել նրանց ներգրարվել դպրոցի համար ֆինանսական միջոցների ստեղծման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման, արտաբյուջետային ֆոնդի ձևավորման գործընթացում

Հոգաբարձուների նպատակը պետք է լինի ներդրումներ և նվիրատվություններ ներգրավել անհատ բարերարներից, դպրոցի շրջանավարտներից և կամավոր ֆինանսավորողներից Գործընթացը կլինի առավելապես թափանցիկ, մատչելի բարերարի, դպրոցի, տեղական ինքնակառավարման և պետական մարմինների համար:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Զառիթափի միջնակարգ դպրոցը հայտնի է իր շրջանավատներով, որոնք հասել են հաջողության ու ձեռքբերումների կյանքի ամենատարբեր բնագավառներում: Անհրաժեշտ եմ համարում ստեղծել շրջանավարտների խորհուրդ, որի աշխատանքներն ուղղված կլինեն դպրոցի հետագա զարգացմանը: Կարծում եմ՝ շրջանավարտները մեծ սիրով կկիսեն իրենց առաջավոր փորձը թե՛ ուսուցիչների, թե՛ շրջանավարտներ հետ, կհովանավորեն կամ կգտնեն հովանավորներ դպրոցի հետագա զարգացմանն ուղղված գործունեության նպատակով ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԵՐԸ

Անհրաժետ եմ համարում ուսումնական գործընթացի կազմակերպումն արդիականցնել և գրավիչ դարձնել սովորողի և նրա ծնողի համար:

Այդ նպատակով կարևորում եմ դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը:

Անհրաժեշտ է

- ✓ Ուսումնասիրել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում
- ✓ Աջակցել սկսնակ ուսուցիչներին, նախապատրաստել ատեստավորման
- ✓ Կազմակերպել մասնագիտական և մեթոդական խորհրդակցություններ, վերապատրաստումներ
- ✓ Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը. կազմակերպել հատուկ

դասընթացներ, որոնց արդյունքում յուրաքանչյուր ուսուցիչ կտիրապետի համակարգչային ծրագրերին և կկարողանա օգտվել համացանցից

- ✓ Նպաստել ուսուցիչների ինքնակրթմանն ու ինքնազարգացմանը

- ✓ Փորձի փոխանակման, նորը բացահայտելու նպատակով կազմակերպել ուսուցիչների գործուղումներ այլ մարզեր, փոխադարձ այցեր, հրավիրել ոլորտում առաջատար մասնագետների հատուկ սեմինարների, դասախոսությունների:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ

Կրթության բնագավառի գերխնդիրը կրթության որակի բարձրացումն է: Բարձրակարգ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է օգտագործել ուսուցման կազմակերպման ժամանակակից լավագույն մեթոդները, ստեղծել ազգային դպրոցի մի նոր տարբերակ՝ դրա ձևավորման հիմքում դնելով մի քանի պարտադիր սկզբունք.

- ✓ Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա
- ✓ Սովորողի դաստիարակություն՝ ազգային-բարոյական նորմերով
- ✓ Գիտելիքների մատուցում՝ պետական կրթական նոր չափորոշիչներին համապատասխան
- ✓ Մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան
- ✓ Ուժեղացնել միջառարկայական համագործակցությունը

- ✓ Յուրաքանչյուր սովորողի մոտ սեր և նվիրում առաջացնել կրթության նկատմամբ՝ ցույց տալով բարեկեցիկ կյանքով ապրելու իրական ուղին, որն անցնում է դպրոցում:

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և համամարդկային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

Իմ առջև խնդիր եմ դնում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ կարողունակահեն կրթություն ապահովելու և սովորողի վերաբերմունքի ձևավորմանն ու զարգացմանը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է, ինչի մեծագույն մասը բաժին է ընկնում հենց դպրոցին և ուսուցչին:

Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- ✓ Օգնել երեխային ճիշտ հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին
- ✓ Զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը
- ✓ Սովորողների մոտ ձևավորել հարգանք լեզվի, մշակույթի, ազգային ավանդույթների նկատմամբ՝ նրան դարձնելով այդ արժեքների կրող
- ✓ Սովորողի մեջ ձևավորել ինքնակատարելագործման ներքին պահանջ

Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել միասնական դաստիարակչական համակարգ՝

- ✓ Դաստարակչական գործընթացում լինել միասնական
- ✓ Ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացում
- ✓ Ապահովել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ սահմանված դասղեկական պլանների վրա
- ✓ Բացահայտել և հատուկ մանկավարժական մոտեցում իրականացնել վարքի խնդիր ունեցող երեխաների հետ
- ✓ Դասղեկի ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր
- ✓ Ընդլայնել դասարանների, նաև առանձին սովորողների ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները
- ✓ Համագործակցել իրավապահ մարմինների հետ

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի, ուսուցչի աշխատանքն արդյունավետ է, եթե ամուր է ընտանիք-դպրոց կապը

Անհրաժեշտ եմ համարում՝

- ✓ Ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց համագործակցությունը
- ✓ Բարձրացնել փոխադարձ վստահության մակարդակը
- ✓ Ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ
- ✓ Դասղեկների միջոցով տեղեկանալ սովորողների ընտանիքների առաձնակի դժվար պայմաններից, միայն հաշմանդամ կամ գործազուրկ ծնողի խնամքի տակ ապրող երեխաների մասին
- ✓ Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ և հանդիպումներ դպրոցի անձնակազմի հետ
- ✓ Խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողներին

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

- ✓ Բացօթյա դասասենյակի ստեղծում
- ✓ Լաբորատորիաների համալրում տեխնիկայով և նյութերով
- ✓ Աշակերտների դաստիարակման գործառույթին ուղղված միջոցառումներ
- ✓ Էթիկայի և էսթետիկայի ժամեր

(Դասընթացները կարելի է կազմակերպել ինչպես դասաժամերից հետո, այնպես էլ բացակա ուսուցիչների չփոխարինված դասաժամերին)

- ✓ ,Մշակույթի ժամեր առարկայի ուսումնասիրություն, որի ժամանակ կհրավիրվեն մշակութային տարբեր գործիչներ, արվեստի կարկառուն դեմքեր
- ✓ Ռազմահայրենասիրական դաստիարակության խրախուսում
- ✓ Առողջ ապրելակերպ, սպորտի խթանում

Նախատեսվում է ռադիոկապի միջոցով ձայնարձակել ազգային և դասական երաժշտություն

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- Սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ
- Դպրոցում ապահովել անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններ
- Համագործակցել բժշկական հաստատությունների հետ, պարբերաբար կազմակերպել անվճար բժշկական կանխարգելիչ զննումներ
- Հատուկ ուշադրության կենտրոնում պահել ԿԱՊԿՈՒ երեխաներին
- Հարստացնել դպրոցի սպորտային բազան
- Սպորտի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով կազմակերպել բաց դասեր, սպորտլանդիաներ՝ պարբերաբար հրավիրելով մեծ սպորտում հաջողություններ գրանցած մարզիկների, օլիմպիական չեմպիոնների

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ միջոցների ձեռնարկում
- Էլեկտրոնային հրաձգարանի ստեղծում
- Վարժանքների կազմակերպում
- Այցեր զորամասեր, բարեգործական միջոցառումներ
- Հանդիպում հերոսների հետ
- Հայրենասիրական ֆիլմերի դիտում

4.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N	Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Հնարավոր ֆինանսական ծախսեր
1	Ուս. հաստատության կանաչ տարածքների բարեկարգում,նստարանների տեղադրում	Տնօրենություն ,համայնք	2023-2024 թթ	Դպրոցի բյուջե, համայնք, դրամաշնորհային մրցույթներ
2	Սպորտդահլիճի բարեկարգում, ժամանակակից մարզական գույքի ձեռքբերում, սպորտի նկատմամբ հետաքրքրության աճ	Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող	2026-2028 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային եկամուտներ, բարերարներ, հովանավորներ
3	Դպրոցի շենքը հնարավորինս համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը	Տնօրենություն	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային եկամուտներ, բարերարներ
4	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում, նոր համակարգիչների ձեռքբերում	Տնօրեն	2024-2026 թթ	Դպրոցի բյուջե, բարերաներ
5	Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Տնօրեն	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային եկամուտներ,
6	Հոգեբանի, լոգոպեդի կաբինետների ստեղծում	Տնօրենություն, կառավարման և խորհրդակցական մարմիններ	2027-2028 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ
7	SMART գրատախտակների ձեռքբերում	Տնօրեն	2023-2024 թթ	Դպրոցի բյուջե, մրցույթներ, դրամաշնորհներ

				նվիրատվություններ
8	Աշակերտների համար անհատական պահարանների ձեռքբերում, դպրոցական գույքի նորացում	Տնօրենություն	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, նվիրատվություններ
9	Բարերարների, հովանավորների ներգարվում	Տնօրեն	2023-2028 թթ	
10	Լրացուցիչ կրթական ծրագրերի, ձեռնարկատիրական գործունեության իրականացում	Տնօրեն, մանկավարժներ , հրավիրված մասնագետներ	2023-2028 թթ	
11	Կառավարման խորհրդի դերի բարձրացում	Տնօրենություն	2023-2028 թթ	
12	Բժշկական հաստատությունների հետ համագործակցություն՝ անվճար կանխարգելիչ բուժզննման նպատակով	Տնօրեն, դասղեկներ,բուժ հաստատության աշխատակիցներ	2023-2028թթ	Անվճար
13	Շնորհալի սովորողների բացահայտում , շնորհալիների ակումբի ստեղծում, խրախուսում	Տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկներ	2023-2024 թթ.	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ
14	Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ստեղծում	Տնօրեն	2023-2024 թթ.	

15	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի ամբողջական անցում էլեկտրոնային փաթեթի	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2024 թթ	
16	Սոցիալական և բարեգործական ծրագրերի իրականացում	Տնօրենություն, ծնողներ, համայնք, ուսուցիչներ, սովորողներ	2023-2028 թթ	
17	Դպրոցի հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումներ, քննարկումներ	Տնօրենություն, ՀԿ-ներ	2023-2028 թթ	



Կամավոր գրավոր

Դպրոցն ամբողջի հայրապետական գրավոր կամավոր ամենամեծ ցանկությունն է իր անասնաբուծության գործունեությունը հայրենիք մեկ։ Երբ ես գնում եմ դպրոց կամ գրասենյակ միշտ մտածում եմ, որ դուռն ցցուցարան կանգնած հսկում են ասեմանը և իմ մեկ անձնական են միշտ ու անխոնջ հոգատարությունը։ Յուրաքանչյուր քայլ անելիս ես զգում եմ, որ դուռ սրտաշարժանում ես բնակիչը քայլ անում բոլոր-բոլորին։ Քանի՞սն են նրանք, կարծում ես թարգ կրամ, որ սրտանեկան մեկ կոնքայր կարող, որովհետև դուռ սրտանեկ ես, որ հայի կենդանի սպասող ամեն հայ մեկ իր որդեկոնքայրը անվանի։

Մեկ գրում է
Գրիգոր
Բոլոր

14 դ.

18	Ծնողների համար միջոցառումներ, սեմինարներ, կինոդիտումներ, հանդիպումներ	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, հոգեբան, դասղեկներ	2023-2028 թթ	
19	Մանկավարժական առաջավոր փորձի ներդնում պրակտիկ աշխատանքում	Տնօրենություն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028 թթ	
20	Սկսնակ ուսուցիչների վերապատրաստում, նախապատրաստում պարտադիր և կամավոր ատեստավորման	Տնօրենություն, մ/մ նախագահներ, փորձառու ուսուցիչներ	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ
21	Համակարգչային ծրագրերի հատուկ դասընթացներ ուսուցիչների համար	Տնօրենություն	2023-2024 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ
22	Փորձի փոխանակման նպատակով գործուղումներ, փոխայցեր, սեմինարներ, դասախոսություններ	Տնօրեն	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, հովանավորներ
23	Մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ արդիպահանջներին համապատասխան	Տնօրենություն, ուսուցիչներ,	2023-2028 թթ	
24	Միջառարկայական համագործակցություն, լրացուցիչ կրթության կազմակերպում	Տնօրենություն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028 թթ	
25	Դաստիարակչական աշխատանքներ՝ հիմնված դասղեկական պլանների վրա	Տնօրենություն, ՄԿԱԳ տեղակալ	2023-2028 թթ	
26	Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ	Տնօրենություն, հոգեբան, դասղեկ	2023-2028 թթ	

27	Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում	Տնօրենություն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ	2023-2028 թթ	

28	Համագործակցություն իրավապահ մարմինների հետ	Տնօրենություն	2023-2028 թթ	
29	Համագործակցություն ՀՀ և արտասահմանյան դպրոցների հետ	Տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկներ	2023-2028 թթ	
30	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028 թթ	
31	Մենթալ թվաբանության դասասենյակի ստեղծում	Տնօրեն	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, բարերաներ
32	,Արմաթե լաբորատորիաների հետ համատեղ խմբակի ստեղծում	Տնօրեն	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային միջոցներ
33	Էթիկայի և էսթետիկայի, մշակույթի ժամի ուսուցանում	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկ, հրավիրված մասնագետներ	2023-2025թթ	Դպրոցի բյուջե , արտաբյուջետային միջոցներ, ծնողական համայնքի աջակցություն
34	Ուսումնադաստարակ-չականի գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ և հանդիպումներ առարակայական ուսուցիչների հետ,բաց	Տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկ,ծնողներ	2023-2028 թթ	

	դռների օր			
35	Խրախուսել աշակերտներին ,ծնողներին, ուսուցիչներին	Տնօրենություն	2023-2028 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ
36	Գեղագիտական խմբակների հիմնում	Տնօրեն	2023-2028 թթ	
37	Ռազմահայրենասիրական և մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում	Տնօրեն, ուսուցիչներ,զինղեկ ծնողներ,հյուրեր	2023-2028 թթ	
38	Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միջոցառումների և	Տնօրենություն, սպորտի ներկայացուցիչներ, ծնողներ, հյուրեր	2023-2028 թթ	
	սպորտլանդիաների կազմակերպում			
39	Արևային էներգիայի համակարգի ներդրում	Տնօրենություն	2023-2028 թթ	Հովանավորներ, բարերարներ
40	Էլեկտրոնային հրաձգարանի ստեղծում	Տնօրեն	2023-2028 թթ	Բարերարներ

5.ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=173741 Կետ 47-104

6. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատական գործընթաց է։

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները։ Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը։ Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար։

,Հանրակրթության մասինե օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը։

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական։

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է։ Ներքին գնահատման մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները։

Ուսումնական հրաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը։

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքայի նպլանների կատարողականներն են:

7.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերը	Ռիսկերը մեղմող գործողությունները
Նորամուծությունների մերժում	Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում
Մոտիվացիայի ցածր մակարդակ	Խրախուսանք
Ֆինանսներ	Գտնել ֆինանսական աղբյուրներ
Մշակութային կարծրատիպեր	Պահպանելով հինը՝ ներմուծել նորը՝ կոտրելով կարծրատիպերը

8.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

- Ֆինանսական միջոցներ
- Դրամաշնորհներ
- Նվիրատվություններ
- Բարերարներ
- Հովանավորներ
- Ձեռնարկատիրություն
  - ✓ Լաբորատոր սարքավորումներ և նյութեր
  - ✓ Օկուլյար մանրադիտակ
  - ✓ Երաժշտական գործիքներ
  - ✓ Մարզագույք
  - ✓ Դիդակտիկ պարագաներ
  - ✓ Խաղեր և լրացուցիչ գրականություն
  - ✓ Ժամանակակից տեխնիկա,երաժշտական կենտրոն

Կամքի մեծ ուժ

9.Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են՝

- ✓ դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 2 անգամ դպրոցի տվյալ ուստարվա համար ժամանակացույցով նախատեսված միջոցառումներիիրականացման քննարկումն ու համապատասխան գնահատականների ամրագրումը
- ✓ դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը
- ✓ համայնքի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավումը դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին եւ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին
- ✓ զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհրդների կողմից
- ✓ յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ժամանակի պահանջներից և ստեղծված իրավիճակից ելնելով՝ սույն ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման

Շնորհակալություն

Օգտագործված աղբյուրներ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=168835
2. Համացանց
3. Ջոն Դյուի
4. Վուդրո Վիլսոն